ԱՐՄԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԳԱԱ պատմության ինստիտուտ
«Շիրակի պետական համալսարան» հիմնադրամ
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
armenani@mail.ru

«ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ» ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Բանալի բառեր՝ Ալեքսանդրապոլի գավառ, «Եղբայրական օգնության» կոմիտե, հանրակացարան, պատերազմ, գաղթական, որբանոց:

Առաջին աշխարհամարտի տարիներին հայության մի ստվար հատվածը սեփական հայրենիքի տարածքում բնաջնջվեց: Թուրքական յաթաղանից փրկվածների մի մասը՝ մոտ 300.000 մարդ, անցավ Արևելյան Հայաստան և Կովկասի հայաշատ շրջաններ: Նրանց ընդունման, ցուցակագրման ու տեղավորման դժվարին գործն իրենց ուսերին վերցրեցին Անդրկովկասի հայաշատ նահանգներում ու գավառներում գործող հասարակական կազմակերպությունները՝ «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերությունը», «Հայ Նպաստամատույց Ընկերությունը», «Քաղաքների միությունը», Բաքվի «Հայկական Բյուրոն» և այլք: Այդ գործում հատկապես անգնահատելի ներդրում ունեցավ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի կարգադրությամբ 1914 թ. հոկտեմբերին ստեղծված «Եղբայրական օգնության» կոմիտեն:

Ռազմական գործողությունները Կովկասյան ճակատում սկսվեցին 1914 թ. նոյեմբերի 2-ին: Հաջորդ երեք տարիների ընթացքում

Ալեքսանդրապոլի գավառն ընդունեց մոտ 95.000 փախստական-գաղթականների: Սրանց մի մասը մնաց գավառի տարածքում, իսկ մյուսներն անցան կայսրության այլ շրջաններ[1]: Նորեկներին ընդունելու, տեղավորելու, ինչպես նաև գաղթականական հիվանդանոցներ, դպրոցներ ու որբանոցներ բացելու նպատակով, 1914 թ. հոկտեմբերի 31-ին Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետի գլխավորությամբ, տեղում բացվեց «Եղբայրական օգնության» կոմիտեի մասնաճյուղ[2]: «Աղէքսանդրապօլի հայ ժողովուրդը, որ... միշտ ջերմ կարեկից է եղել հայ ժողովրդի ցաւերին,- գրում է «Գաւառի ձայն» պարբերականն այդ կապակցությամբ,- այս անգամ էլ, անտարբեր չէ մնալու դեպի հարազատների հառաչանքները: Քաղաքիս հասարակութիւնը կազմել է մի բիւրօ, որը... պարտաւոր է օգնել վիրաւոր և հիւանդ զինուորներին, հայ կամաւորներին և խնամել հայ գաղթականներին»[3]: Հաշված օրերի ընթացքում կոմիտեն միայն Ալեքսանդրապոլում 100–250 հոգանոց 18 հանրակացարան կահավորեց փախստականներին ընդունելու համար:

Առաջին փախստականները գավառում հայտնվեցին 1914 թ. նոյեմբերի կեսերին[4], իսկ 1915 թ. հունվարի վերջին նրանց թիվը հասավ մոտ 7000-ի[5]: «Գաւառի ձայն»-ի հավաստմամբ՝ նրանք Կո-

---

[1] Ալեքսանդրապոլի գավառում գաղթականության տեղաշարժի մասին մանրամասն տե՛ս **Հայրապետեան Ա.,** *Առաջին աշխարհամարտը և Ալեքսանդրապոլի գաւառ հաստատուած գաղթականութեան թուաքանակը,* «Հայկազեան Հայագիտական Հանդէս», հատոր ԼԵ, Պէյրութ, 2015, էջ 249–271:

[2] Մասնաճյուղը բաղկացած էր 7 սեկցիաներից՝ «գաղթականներին խնամող, վիրաւորների, կամաւորների, գիւղական կազմակերպութիւների, հաշիւներ ստուգող, վիճակագրական և հանգանակիչ» (Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1311, թթ. 23–24: Մշակ, Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3):

[3] Գաւառի ձայն, Աղէքսանդրապօլ, 1914, N 109, 23 նոյեմբերի, էջ 3:

[4] ՀԱԱ ֆոնդ 50, ցուցակ 1, գործ 20, թթ. 12, 139, 151–158, 249–252, գործ 21, թթ. 141–165:

[5] *Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914–1915гг,* Перепись произведена 30-го января 1915 г., Эривань, 1915, с. 26–31.

միտեից անվճար բնակարան, վառելիք, հագուստ և մեկ անձի համար ամսեկան երկու փութ հաց (1 փութը կշռում է 16կգ 380 գ ստացան)[6]: Կոմիտեն հաշվարկեց նաև յուրաքանչյուր գաղթական ընտանիքի իր բնակության նախկին վայրը վերադարձնելու և կորցրած տնտեսությունը վերականգնելու համար պահանջվող ծախսը՝ մոտ 500 ռուբլի[7]:

Խնամատարության գործն անխափան ընթացավ նաև 1915 թ. գարնանը, երբ սկսվեց արևմտահայության ներգաղթը: «Մշակ»-ին թղթակցած Գևորգ Ք. Մկրտումյանը, որը բարեգործական առաքելությամբ Աստրախանից գործուղվել էր Ալեքսանդրապոլ, բարձր գնահատական է տվել «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի այդ օրերին ծավալած գործունեությանը՝ շեշտելով, թե վերջինս «պատուով է տանում իր առաջ դրված գործը»[8]: Հոդվածագրի հավաստմամբ՝ Կոմիտեի «գաղթականներին խնամող» սեկցիան (նախագահ՝ Ա. Իսահակյան, փոխնախագահ՝ Պ. Գենջյան, անդամներ՝ Հ. Ք. Խաչվանքյան, Ա. Կարանյան, Մ. Տեր-Հարությունյան, Ս. Թոփալյան, Պ. Մոճոռյան, Պ. Բեբուրյան, Վ. Արաբաջյան) քաղաքում և շրջանի 80 գյուղերում հաստատված 8.000 գաղթականների վիճակը թեթևացնելու համար գավառի տարածքը բաժանել էր շրջանների, ապա շրջկենտրոններում նշանակել «լիազորներ», որոնց միջոցով էլ կարգավորում էր հաշվառման ու առաջին անհրաժեշտության ապրանքների բաշխման գործը: Եվ այս ամենը կատարվում է ընդամենը 64.000 ռուբլով[9]:

1915 թ. ամռանն իրավիճակը ռազմաճակատում կտրուկ փոխվեց: Ռուսական զորքերի նահանջի հետևանքով տասնյակ հազարավոր քրիստոնյաներ Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթներից

---

[6] Գաւառի ձայն, Ալէքսանդրապոլ, 1915, N 1, 11 յունուարի, էջ 3:
[7] Մշակ, Թիֆլիս, 1915, N 51, 10 մարտի, էջ 2–3:
[8] Նույն տեղում, N 100, 13 մայիսի, էջ 3:
[9] Մշակ, Թիֆլիս, 1915, N 100, 13 մայիսի, էջ 3:

հաշված օրերի ընթացքում անցան Արևելյան Հայաստան: Օգոստոսի վերջին օրերին միայն Ալեքսանդրապոլի գավառում գաղթականների թիվը հասավ 31000-ի[10]: Արևմտահայության զանգվածային տեղաշարժը «Եղբայրական օգնության» կոմիտեին կանգնեցրեց լրջագույն խնդիրների առջև: Նրա աշխատանքներում առաջին անգամ էական թերացումներ և բացթողումներ նկատվեցին: Օրինակ, նորեկներին ապաստանելու և նրանց ֆիզիկական գոյությունն ապահովելու համար կոմիտեն 4000 հոգու տեղավորեց «պահուստային» ֆոնդում՝ Փամբակի գավառակում: Սակայն դա արեց հակառակ տրամաբանությանը. Փամբակի մեծ գյուղերում, որտեղ կար 300 և ավելի տուն (օրինակ՝ Մեծ Ղարաքիլիսան), տեղավորեցին 130 հոգանոց խմբեր, իսկ փոքր գյուղերում, օրինակ, 80 տուն ունեցող Դարբազում, որտեղ նորեկների համար նույնիսկ հարմար շինություն չկար՝ 100 գաղթական: Սխալ հաշվարկի արդյունքում գաղթականների ու տեղացիների հարաբերությունները շուտով այնքան սրվեցին, որ դարբազցիները սպառնացին գաղթականներին իրենց գյուղից վտարել[11]: Հակամարտությունը շարունակվեց կես տարի և լուծվեց միայն 1916 թ. մարտին, երբ տեղ հասավ ԱՄՆ-ից ուղարկված օգնությունը[12]:

Փամբակում գաղթականների տեղավորման ժամանակ առաջացած խնդիրներին անդրադարձել է նաև «Մշակ»-ը: Պարբերականի «Ականատես» ստորագրությամբ թղթակցի վկայությամբ՝ գաղթականների սպասելիքները չարդարացան հատկապես Մեծ Ղարաքիլիսայում: Խուսափելով «չարաբաղդ աղետյալների» խնամքի ծանր պարտականությունից՝ մոտ 10000 բնակչությամբ այս գյու-

---

[10] *Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915 г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них,* Тифлис, 1915, стр. 26.

[11] Գաւառի ձայն, Ալէքսանդրապոլ, 1916, N 7, 7 փետրվարի, էջ 4:

[12] Նույն տեղում, N 19, 20 մարտի, էջ 4:

ղաքաղաքը, որ ուներ բազմաթիվ դատարկ ու լուսավոր բնակարաններ, դեղատներ, մթերքի շուկա և այլ հարմարություններ «ուղղակի զլացաւ իր մէջ պատսպարել հիւանդների, տանջվածների և որբերի մի խոշոր կօնտինգենտ»[13]:

Այն, որ «Եղբայրական օգնության» կոմիտեն գաղթականությանը տեղավորելու ընթացքում կարող էր թերացումներ ունենալ՝ հասկանալի է, և ինչ որ չափով բացատրելի: Ռուսական զորքերի հուլիսյան նահանջը խուճապ առաջացրեց և շուրջ 200.000 արևմտահայեր հաշված օրերի ընթացքում Արևելյան Հայաստան անցան: Վերջիններիս ընդունման ու տեղավորման խնդիրը լուծելու համար կոմիտեն ստիպված էր օգտագործել Ալեքսանդրապոլի գավառի «պահուստային» ֆոնդը՝ առանց նախապատրաստական աշխատանքներն այստեղ ավարտին հասցնելու: Ավելին, օգոստոսի 22-ին այցելած «Մշակ»-ի «Մ.» ստորագրությամբ թղթակիցը գրում էր, թե շրջանի հազարավոր փախստականների անմիջական խնամքի ծանրությունը բացառապես «Եղբայրական օգնության» կոմիտեի ուսերին է ընկած: Մինչդեռ, հասարակական մյուս կազմակերպություններից «դեռևս ոչինչ չի ստացվել, բացի լիառատ խոստումներից ու հեռագիրներից»[14]:

Օգոստոս-հոկտեմբեր ամիսներին օրհասական էր նաև Ալեքսանդրապոլի հանրակացարաններում հաստատված գաղթականության վիճակը: «Միայն քաղաքի մէջ,- գրում է «Մշակ»-ին թղթակցած Արշակ Սաֆրաստյանը,- 6000 գաղթական կա, որոնցմէ՝ փոքր մաս մը քաղաքացոց տունը կապրի, իսկ մեծամասնութիւնը՝ հանրակացարաններու մէջ»: Հոդվածագրի հավաստմամբ, սրանք աննախանձելի դրության մեջ էին, զուրկ «կեանքի անհրաժեշտ պիտոյքներէն», կոտրված պատուհաններով սենյակներում, ծղոտից

[13] Մշակ, Թիֆլիս, 1915, N 177, 13 օգոստոսի, էջ 2:
[14] Նույն տեղում, N 187, 26 օգոստոսի, էջ 3:

ներքնակների վրա տեղավորված էին 8–15 ընտանիքներ՝ սոված, առանց անկողին ու հագուստ, իսկ ծուխն ու գարշահոտությունը «քեզ կը պարտաւորեցնէ դուրս փախչիլ՝ մաքուր օդի մեջ դիտելու գաղթականները»[15]: Ա. Սաֆրաստյանը նաև պատմում է, թե հոկտեմբերի 30-ին ականատես է եղել մի տհաճ միջադեպի, երբ հաց բաժանելու ժամանակ «քիչ մը շատ պոռացող գաղթականի մը վրայ հսկիչ-վարժապետը գաւազանով յարձակեցաւ և պիտի ծեծէր զայն»[16]:

Միջադեպը տեղի է ունեցել «Կարանօվների» հանրակացարանում: Թե ինչ ընթացք է ստացել հսկիչի և գաղթականի միջև ծագած վեճը, հայտնի չէ: Բայց ընդունելի չէ նաև Ա. Սաֆրաստյանի վերաբերմունքը «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի գործունեության նկատմամբ: Մեր կարծիքով՝ արդարացի չէ այդ կազմակերպության մեկամյա տաժանակիր աշխատանքը «սևացնել» մեկ մասնավոր դեպքի պատճառով: Իսկ արևմտահայության՝ «կեանքի անհրաժեշտ պիտոյքներէն» զուրկ լինելու պատճառը հետևյալն էր. 1915թ. հոկտեմբերին Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականների թիվը հասել էր 32.000-ի[17]՝ ինչը կազմում էր Երևանի նահանգում առկա գաղթականության ընդհանուր թվի 30%-ը: Համեմատության համար նշենք, որ նույն օրերին Երևանում և գավառում այդ թիվը կազմում էր 19.800, իսկ Էջմիածնի գավառում՝ 16.000 մարդ[18]:

Ալեքսանդրապոլի գավառի գյուղական հասարակության շնորհիվ, որ «դարերից ի վեր գրեթէ անընդհատ իր վզին էր վերցրել

---

[15] Մշակ, Թիֆլիս, 1915, N 250, 11 նոյեմբերի, էջ 3:

[16] Նույն տեղում:

[17] ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 429, թ. 1–7: Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 2, 3 յունուարի, էջ 47–48:

[18] Մշակ, Թիֆլիս, 1915, N 229, 17 հոկտեմբերի, էջ 3:

թշուառութեան ենթարկվածին»[19], սնունդի մատակարարման հարցում առաջացած դժվարությունները շուտով հարթվեցին: Գաղթականների 95%-ը՝ որպես նախկին գյուղաբնակներ, նախապատվությունը տվեց «գօմի սենյակներին», որովհետև ավելի հաճելի էր համարում «ախոռների կողքին ապրելը՝ քան թէ քաղաքի խոնաւ բնակարանները»: Գավառի գյուղական ազգաբնակչությունը սիրով ընդունեց բոլորին: Օրինակ, Մահմուդջուղը, որ ուներ 250 ընտանիք, ընդունեց 300 գաղթական, Մուսլուղլին ուներ 120 ընտանիք և ընդունեց 172 գաղթական, իսկ Ղըրխը, որ ուներ 75 ընտանիք՝ ընդունեց 135 գաղթական: Ատրպետի հավաստմամբ՝ գաղթականությունը հաստատվում էր գյուղերում սեփական շահից դրդված. այլուր ու անհրաժեշտ այլ պարագաներ ստանալով «Եղբայրական օգնության» կոմիտեից՝ նրանք շարունակում էին «վառել գիւղացու աթարը» և օգտվել նրա սննդի պաշարներից[20]:

Ցավոք, «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն անմասն չմնաց զրպարտություններից ու կեղծ ամբաստանություններից: Հայության համար օրհասական այդ օրերին հասարակական այն կազմակերպությունները, որոնք ի պաշտոնե կոչված էին ամոքելու ժողովրդի վերքերը, հնարավոր բոլոր միջոցներով արշավ սկսեցին Կոմիտեի դեմ՝ այդ կերպ համազգային ողբերգությունն օգտագործելով ի նպաստ իրենց շահերի: Այսպես՝ 1915 թ. դեկտեմբերին «Հորիզոն» պարբերականում լույս տեսավ Կարապետյանի «Բողոքներ» խորագրով խմբագրականը, որտեղ չստուգված փաստերի հիման վրա հեղինակը «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեին անգործության մեջ մեղադրեց: Ըստ Կարապետյանի՝ Ալեքսանդրապոլի գավառ հասած 14.500 գաղթականներից համեմատաբար բարվոք վիճակում էին գյուղերում տե-

[19] Նույն տեղում, N 251, 12 նոյեմբերի, էջ 3:
[20] Նույն տեղում:

ղավորված 12.000-ը: Մնացած 2.500-ը, որ հաստատվել էին քաղաքի հանրակացարաններում՝ ծայրահեղ ծանր վիճակում էին գտնվում. «Ամեն տեղ ցրտից ու քաղցից կուչ եկած մարդիկ, մեծ մասամբ կանայք ու երեխաներ: Վառարաններ համարեա թե չկան: Բոլորը կիսամերկ են, համարեա բոբիկ, մայրերը յուսահատութեամբ երեխաները ձգած և նրանց քովը կուչ եկած, նայում են ցրտից գալարվող վտիտ ու կիսամերկ անդամներին»[21]:

Հոդվածը, որն ավելի շատ նման էր ամբաստանության, անմիջապես վերահրատարակվեց «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» պաշտոնաթերթ «Համբաւաբեր»-ում[22], ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ խմբագրականի իրական պատվիրատուն հենց վերջինս էր: Մեր հաշվումներով աշխարհամարտի տարիներին «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության» կողմից մամուլում մեկ տասնյակից ավելի անգամ «Եղբայրական օգնության» կոմիտեի և նրա մասնաճյուղերի գործունեությունը վարքաբեկելու փորձ է արվել: Կոմիտեն, իր գործունեության մասին թերթերում լույս տեսած թղթակցությունները համարելով անլուրջ ու իրականությանը չհամապատասխանող, երբևէ չի կարևորել դրանց հերքում տալը, սակայն Կարապետյանի խմբագրականն ու «Համբաւաբեր»-ում դրա վերատպումն արդեն կրում էին «...լուրջ մեղադրանքի բնոյթ, դրա համար կոմիտէս որոշեց տալ համառօտ տեղեկութիւններ Ալէքսանդրապոլի շրջանի փախստականների դրութեան մասին»[23]:

Ըստ այդմ՝ 1914 թ. նոյեմբերից Ալեքսանդրապոլի գավառում հաստատված փախստականների խնամատարությամբ զբաղվող կոմիտեն բացարձակ զրպարտություն էր համարում «Բողոքագրի»

---

[21] Հորիզոն, Թիֆլիս, 1915, N 278, 12 դեկտեմբերի, էջ 2:
[22] Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 2, 3 յունուարի, էջ 62:
[23] Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 8, 14 յունուարի, էջ 5:

այն հատվածը, թե իբր հանրակացարաններում կան «գրտից ու քաղցից կուչ եկած մարդիկ, մեծ մասամբ կանայք ու երեխաներ», և որ «հացի, նպաստի և մանաւանդ հագուստի բաշխումն կատարւում է անկանոն»[24]: Ըստ կոմիտեի ունեցած վիճակագրական տվյալների՝ 1915 թ. հոկտեմբերի դրությամբ գավառում կար 22.815 փախստական (Կարապետյանի 14.500-ի փոխարեն), որից 15.971-ը հաստատվել էր գյուղերում, 2.604-ը՝ քաղաքի հանրակացարաններում, իսկ 4240-ը՝ մասնավոր տներում[25]: Քաղաքի բոլոր հանրակացարաններն այդ պահի դրությամբ ապահովված են եղել վառելիքով ու վառարաններով: Յուրաքանչյուր փախստական կոմիտեից օրական ստացել է 15 կոպեկ սնվելու համար, ինչպես նաև օճառ, տաք ջուր, հագուստ, իսկ յուրաքանչյուր 20-րդ օրը ուղարկվել է բաղնիք: Կոմիտեն մեծ ուշադրություն է դարձրել նաև առողջապահության խնդրին: «Երիտասարդական Միութեան» և «Ալագեազի Զաւակունք» ընկերությունների աջակցությամբ կոմիտեն փախստականների համար 1914 թ. դեկտեմբերի 27-ին բացել էր հիվանդանոց ու դեղատուն[26]:

Հարկ է նշել, որ շնորհիվ «Եղբայրական օգնության» և «Քաղաքների միության» կոմիտեների համատեղ աշխատանքի, Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականության շրջա-

---

[24] Նույն տեղում, 1915, N 278, 12 դեկտեմբերի, էջ 2:

[25] Նույն տեղում, 1916, N 8, 14 յունուարի, էջ 5: Ի դեպ «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն այն եզակի կազմակերպություններից մեկն էր, որն իր զեկուցագրերում ու հաշվետվություններում միշտ տարբերակել է փախստականին գաղթականից:

[26] 1915 թ. ամռանն Ալեքսանդրապոլ քաղաքի և համանուն գավառի տարածքում գաղթականական բոլոր հիվանդանոցներն անցան «Քաղաքների Միության» ենթակայության տակ (Մանրամասն տե՛ս *Положение беженцев в Александропольском районе,* Баку, 1915; *Краткие сведения о волне беженцев из Турецкой Армении в июле 1915г. и о мерах, принятых Кавказским Комитетом Союза городов для борьбы с эпидемией среди них,* Тифлис, 1915; *Краткие сведения о положении беженцев на Кавказе и оказанной им Союзом городов помощи за время с 20-го сентября по 1-ое ноября 1915 г.,* вып. 2, Тифлис, 1915.):

նում մահացության մակարդակը խիստ ցածր էր: Ըստ տեղի փոխանորդ Արտակ վարդապետի 1916 թ. հունիսի 16-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ին ներկայացրած տեղեկագրի՝ ցրտից, սովից ու հիվանդություններից 1915 թ. ընթացքում գավառում մահացել էր ընդամենը 1164 գաղթական[27]: Այն դեպքում, երբ Բ. Իշխանյանի հաշվումներով՝ Էջմիածնում միայն 1915 թ. օգոստոսի վերջին տասնօրյակում սովի և համաճարակի զոհ էր դարձել 2135 մարդ[28]:

1915 թ. նոյեմբերին աշխատանքային այցով Ալեքսանդրապոլ ժամանած իշխան Ա. Արղության-Երկայնաբազուկը «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի գործունեությունը գնահատել է բավարար: «Քաղաքների միության» կովկասյան բաժանմունք ներկայացրած իր զեկուցագրում վերջինս գրել է, թե գաղթականներ կան գավառի բոլոր 186 գուղերում՝ «մեկ տանը միջինը՝ 3 մարդ»[29]: Գաղթականների մեծ մասն ապահովված էր անվճար կացարանով և Կոմիտեից ստանում էր նպաստ՝ մեկ անձին օրեկան 15 կոպեկ կամ 5 կոպեկ և 1.5 ֆունտ ալյուր[30]: Առավել բարվոք վիճակում էին Փամբակի շրջանում հաստատվածները: Նրանք ունեին շուրջ 1000 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, Կոմիտեից ստացել էին 200 վառարան, տաք վերմակներ և հագուստ, իսկ փայտ հայթայթում էին անտառներից: Ա. Արղության-Երկայնաբազուկին զար-

---

[27] ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1306, թ. 3–7:

[28] Մշակ, Թիֆլիս, 1915, N 203, 17 սեպտեմբերի, էջ 2: 1915թ. օգոստոսի վերջին տասնօրյակում Էջմիածնում մահացածների թիվը հաշվելիս Ա-Դոն նշում է 2613 մարդ (Տե՛ս **Ա-Դո,** Մեծ դեպքերը Վասպուրականում 1914–1915 թթ., Ե., 1917, էջ 485):

[29] Ալեքսանդրապոլի, Դիլիջանի և Ղազախի շրջաններում հաստատված գաղթականության վիճակի մասին զեկույցը «Իշխան Ա.Մ. Արղութեան-Երկայնաբազուկի զեկուցումը փախստականների մասին» վերտառությամբ հրապարակվել է «Մշակ»-ում՝ 1915 թ. դեկտեմբերին (Տե՛ս Մշակ, Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3):

[30] 1 ֆունտը կշռում է 453 գրամ:

մացրել էր նաև այն փաստը, որ Կոմիտեն մեծ թվով գաղթականներ-ի ապահովել էր աշխատանքով: «Գրեթէ ճշմարտութիւն է դարձել,- «Մշակ»-ի էջերում գրում է նա,-որ փախստականները չեն ուզում աշխատել՝ գերադասելով ապրել միայն փայաբաժնով և բարեգործութեամբ: Բայց ահա Մ.-Ղարաքիլիսայում կոմիտէտը կարողացել է հարցին մօտենալ հարկաւոր կողմից...»[31]: 100 գաղթականի տեղավորել էին տեղի պղնձի հանքերում, 300 հոգի էլ աշխատում էր Կարսի երկաթգծի և Սարիղամիշի խճուղու շինարարության վրա:

1916 թ. հուլիսին ռուսական զորքերը չորրորդ անգամ նահանջեցին: Դեպի Ալեքսանդրապոլի գավառ շարժվող արևմտահայերի առաջին խմբերը՝ «...տանջված ու թալանված, գլխաւորապէս պառաւ կանայք, զառամեալ ծերեր և վտիտ մանուկներ» կրկին ուղղորդվեցին Փամբակ[32]: Տեղի գյուղացիությունը, որ երբևէ աչքի չէր ընկել տնտեսական բարվոք վիճակով՝ իր հարկի տակ սիրով հյուրընկալեց նորեկներին ու հնարավոր բոլոր միջոցներով մեղմեց նրանց դրությունը: «Քանի մը գյուղերու մէջ տուներ եմ տեսած,- գրում է «Աշխատանք» թերթի թղթակիցը,- ուր փախստականները կապրին իբրև նոյն ընտանիքի անդամներ, միևնոյն սենյակի մէջ, «մէկ հաց և մէկ ջուր»... և թուրքահայ գիւղացիութիւնը դժգոհ չէ իր ռուսահայ եղբայրներէն»[33]: Օգոստոսից «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեն գաղթականների համար Մեծ Ղարաքիլիսայում բացեց նաև «Պարենաւորման խանութ»[34]:

Այդուհանդերձ, որոշ խնդիրներ մնացին տակավին չլուծված: Օրինակ, նպաստի բաշխման կարգը. Կոմիտեն նպաստը Երևանից նախ փոխադրում էր Ալեքսանդրապոլ, իսկ այստեղից էլ՝ Մեծ Ղա-

---

[31] Մշակ, Թիֆլիս, 1915, N 271, 8 դեկտեմբերի, էջ 3:

[32] Մշակ, Թիֆլիս, 1916, N 172, 7 օգոստոսի, էջ 2: Նույնը տե՛ս նաև Մշակ, Թիֆլիս, 1916, N 177, 13 օգոստոսի, էջ 2:

[33] Աշխատանք, Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

[34] Համբաւաբեր, Թիֆլիս, 1916, N 42, 16 հոկտեմբերի, էջ 1328:

ռաքիլիսա: Վճարման այս եղանակը պատճառ էր դառնում նպաստների ուշացման: Անլուծելի էր մնում նաև հագուստի խնդիրը: Թեև կոմիտեն ամերիկյան նպաստամատույց կազմակերպությունների հետ կազմակերպել էր հագուստի բաշխում, և «Տօքթ. ՈՒիլսընի ձեռքով՝ իւրաքանչիւր անհատին բաժնեցին մէկ ձեռք հագուստ և ամէն մէկ ընտանիքին մէկ վերմակ»[35], սակայն խնդրին վերջնական լուծում տալ այդպես էլ չկարողացան:

Անհամեմատ ավելի բարդ էր իրավիճակը Ալեքսանդրապոլում և շրջակա գյուղերում: Օգոստոսին այստեղ հաստատվեցին 8000 կիսամերկ ու սոված սասունցիներ[36]: Նորեկներին տարրական կենսապայմաններով ապահովելու համար «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեն փորձեց այլուրի բաշխումը ժամանակավորապես փոխարինել դրամական նպաստով՝ մեկ փութը 3 ռուբլի հաշվով: Սակայն, այս նոր քաղաքականությունը ոչ միայն իրեն չարդարացրեց, այլև ըստ «Աշխատանք» պարբերականի՝ հանգեցրեց այլուրի գնաճի[37]:

Մինչև տարեվերջ Արևելյան Շիրակի գյուղերում հաստատվեցին ևս 1370 սասունցիներ[38]: Հակառակ գործադրած բոլոր ջանքերին, հասարակական կազմակերպություններին չհաջողվեց ձմռան նախաշեմին լուծել նրանց ապահովման խնդիրները: Ստեղծված իրավիճակում «Եղբայրական օգնության» տեղի կոմիտեի նախագահ Արտակ վարդապետը, Ալեքսանդրապոլի գավառապետ Կալանդարիշվիլին և քաղաքագլուխ Կամսարականը «Մշակ»-ում հրապարակեցին համատեղ կոչ՝ ուղղված անհատ բարեգործներին ու հասարակական կազմակերպություններին. «Վկայում ենք,-նշված է ուղերձում,-որ օգոստոս ամսից Ալէքսանդրօպոլի գաւառը եկած

[35] Աշխատանք, Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:
[36] Մշակ, Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:
[37] Աշխատանք, Եր., 1916, N 20, 10 օգոստոսի, էջ 4:
[38] Մշակ, Թիֆլիս, 1916, N 282, 18 դեկտեմբերի, էջ 3:

փախստականները, գլխաւորապէս սասունցիներ... առանց չափազանցութեան բոլորովին մերկ են: Կոչ ենք անում բոլոր հիմնարկութիւններին, որ վարում են փախստականական բարեգործական գործեր, բոլոր մասնաւոր բարեգործներին, աղերսելով օգնութեան հասնել պատերազմի խեղճ զոհերին և թոյլ չը տալ, որ գազանութիւններից ազատված՝ նրանք մեռնեն մեր աչքերի առաջ»[39]:

Օգնությունն իրեն երկար չսպասեցրեց: «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի և «Հայ գաղթականների ամերիկյան օգնության կոմիտեի» համատեղ ջանքերով գավառում շուտով բացվեցին 15-ական դազգահներով բրդի և բամբակի մշակման արհեստանոցներ[40]: Սա հնարավորություն տվեց 40 տղամարդու (որպես վարպետներ) և 1450 կնոջ (800-ը՝ բրդի, իսկ 650-ը՝ բամբակի մանարաններում)[41] ապահովել աշխատանքով: Այսինքն, միջին հաշվով մոտ 6000 մարդ բարելավեց իր կենսապայմանները:

«Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն մեծ ներդրում ունեցավ նաև գաղթականության շրջանում դպրոցական գործի կազմակերպման հարցում[42]: Առաջին դպրոցն Ալեքսանդրապոլում բացվեց 1915 թ. ամռանը, դեկտեմբերին՝ 296 սաների համար՝ Մեծ Ղարաքիլիսա, Համամլու, Ղշլաղ, Բոզգյուղ և Բեքանտ գյուղերում[43]: Հետագայում, պայմանավորված երեխաների թվի աճով, դպրոցներ բացվեցին նաև գավառի մյուս գյուղերում: Դրանք իրենց սաներին ընդունեցին սիրով, սակայն ոչ բոլոր խնդիրներին

---

[39] Մշակ, Թիֆլիս, 1916, N 244, 1 նոյեմբերի, էջ 3:

[40] Армянский вестник, Москва, 1917, год изд. 2, N 43, 23 ноября, стр. 18.

[41] Աշխատանք, Եր., 1917, N 42, 30 սեպտեմբերի, էջ 1-2:

[42] 1915թ. հոկտեմբերի 1-ին անցկացված մեկօրյա ցուցակագրման տվյալներով Ալեքսանդրապոլ քաղաքում և համանուն գավառում կար 22815 գաղթական, որից 10055-ը կամ 44 %-ը երեխաներ էին (Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1287, թթ. 3–5):

[43] Մշակ, Թիֆլիս, 1916, N 210, 22 սեպտեմբերի, էջ 3: Աշխատանք, Եր., 1916, N 44, 1 հոկտեմբերի, էջ 4:

կարողացան լուծում տալ: Կար ուսուցիչների, գրենական պիտույքների, հագուստի ու սնունդի պահանջ: Պատահում էին դեպքեր, երբ աշակերտների թիվը մեծ էր, իսկ դպրոցի շենքը՝ փոքր: «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն նմանօրինակ խնդիրների լուծումը փորձեց վերցնել իր ուսերին: «Գաւառի ձայն» պարբերականի խմբագիր Հովսեփ Միրզոյանի տնօրինությամբ Ալեքսանդրապոլում հիմնված դպրոցը դարձավ լավագույնը գաղթական երեխաների համար երբևէ բացվածների մեջ: Գործելով Արողության ու Սեյլանյան դպրոցների շենքում՝ այն իր առաջին սաների (200 հայ, 80 հույն) առջև դռները բացեց 1915 թ. հունիսի 22-ին[44]: Հոկտեմբերի 15-ի դրությամբ դպրոցն արդեն ուներ 11 բաժանմունք (9 հայկական և 2 հունական) և 419 սան: Ժամանակակիցների հավաստմամբ, այն աչքի էր ընկնում գերազանց մաքրությամբ ու կարգապահությամբ, սաներն ապահովված էին տաք հագուստով և համազգեստով՝ «մի բան, որպիսին չունին միւս դպրոցներում սովորողները»[45]:

Աշխարհամարտի տարիներին «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեն աչքի ընկավ նաև իր որբախնամ գործունեությամբ: Նույն Հ. Միրզոյանի ղեկավարությամբ Ալեքսանդրապոլում հիմնած որբանոցը ևս ժամանակակիցները համարել են լավագույնը՝ երբևէ բացվածների մեջ: «Աշխատանք» պարբերակա-

---

[44] Դպրոցի մասին մանրամասն տե՛ս նաև ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 2, գործ 1306, թթ. 8–9: *Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914–1922 թթ.*, Փաստաթղթերի ժողովածու, խմբ. **Կ. Ալեքսանյան,** Եր., 2012, փաստ. N 18, էջ 78–82: Армянский вестник, Москва, 1917, год изд. 2, N 8, 20 марта, стр. 11.

[45] Դպրոցի 276 ռուսահպատակ սաներից 269-ը գաղթել էին Կարսից, Օլթիից, Արդահանից և Սարիղամիշից, 6-ը՝ Արդվինից և Տանձուտից, մեկը՝ Մինսկի նահանգից: Ռուսահպատակ սաներից 12-ը երկկողմանի ծնողազուրկներ էին, 20-ը՝ միակողմանի: 138 արևմտահայ սաներից 15-ը գաղթել էին Մանազկերտից, 11-ը՝ Էրզրումից, 20-ը՝ Բիթլիսից, 16-ը՝ Վանից, 43-ը՝ Բուլանղից, 14-ը՝ Մուշից: Արևմտահայերից երկկողմանի ծնողազուրկ էին 29-ը, միակողմանի՝ 48-ը (Մանրամասն տե՛ս, Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 48, 2 մարտի, էջ 4):

նի թղթակից Հ. Վանյանի կարծիքով, հաստատության միակ թերությունն անհարմարավետ շենքն էր[46]: Դրան հակառակ, իդեալական մաքուր սենյակներում որբերն ապահովված էին հագուստով (6 ձեռք ներքնաշոր, համազգեստ) և որակյալ սննդով (առավոտյան տրվում էր թեյ հաց, պանիր, երբեմն ձու կամ կաթ, ցերեկը՝ տաք կերակուր, շաբաթական երեք անգամ մսեղեն, երեկոյան՝ թեյ, հաց, պանիր, երբեմն մածուն): Երեխաների դաստիարակությունն ու խնամքն իրագործվում էր 8–10 օրիորդների կողմից՝ կամավոր սկզբունքով և անվճար: Որբանոցի առօրյան թղթակիցը բնութագրել է հետևյալ կերպ. «Ուրախ, աշխույժ են որբերը, զուարթ ու ծիծաղկոտ, երգն ու բանաստեղծութիւնը դուրս կը թռչին, ակամայ ու վարակուող, իրենց շրթունքներէն: Կը վազին օրիորդի մը հետ դիմացի պարտէզը հայկական պարեր պարելու, մարմնամարզի, խաղի: Ետ կը վերադառնան, կը թէյեն, կը կատակեն…: Վերջը փոքրիկ սրահին մէջ կը սկսին պարել որբերը, եւրոպական և Վանի պարերը…»[47]: Որբանոցին կից գործում էր նաև արհեստանոց, որտեղ «փոքրիկները շինած են ճիլերէ աթոռներ…, կարկտած կօշիկներ, հիւսած են իրենց գուլպաներ և գեղեցիկ ձեռագործեր»: «Տպաւորութիւնը,- գրում է Վանյանը,- զոր թողուց Միրզոյեանի որբանոցը վրաս՝ անջինջ պիտի մնայ, տպաւորութիւն մը որ հոգեկան բարձր տրամադրութիւն և անդորրութիւն բաշխեց»[48]:

Ամփոփելով աշխարհամարտի տարիներին «Եղբայրական օգնության» Ալեքսանդրապոլի կոմիտեի գործունեության համառոտ քննությունը՝ նշենք հետևյալը. 1914–1917 թթ. ընթացքում գավառն ընդունեց ավելի քան 95000 փախստական-գաղթականների: Այն առաջիններից մեկը եղավ, որը սկսած 1914 թ. նոյեմբերի սկզբնե-

[46] Աշխատանք, Եր., 1916, N 20, 9 յուլիսի, էջ 2–3:
[47] Աշխատանք, Եր., 1916, N 20, 9 յուլիսի, էջ 2–3:
[48] Նույն տեղում, էջ 3:

ից իր ուսերին վերցրեց նորեկների ընդունման, տեղավորման և ապրուստի տարրական միջոցներով ապահովելու դժվարին գործը: Իր առաքելության մեջ Կոմիտեն ունեցավ, և՛ վայրէջքի, և՛ վերելքի պահեր, անմասն չմնաց զրպարտություններից ու կեղծ ամբաստանություններից, իսկ նրա գործունեությունը դարձավ քննարկման առարկա պարբերական մամուլի էջերում: Եվ նույնիսկ այդ պայմաններում Կոմիտեի գործունեությունն աշխարհամարտի տարիներին ընդհանուր առմամբ բարձր գնահատականի արժանացավ ժամանակակիցների կողմից: Դրա լավագույն ապացույցն է աշխարհամարտի ընթացքում գավառի տարածքում հաստատված գաղթականության շրջանում մահացության խիստ ցածր մակարդակը:

Կոմիտեն մեծ ներդրում ունեցավ նաև գաղթականության շրջանում դպրոցական գործի կազմակերպման հարցում: Առաջին դպրոցը բացվեց 1915 թ. ամռանը, իսկ Հ. Միրզոյանի տնօրինությամբ հիմնվածը դարձավ լավագույնը գաղթական երեխաների համար երբևէ բացվածների մեջ: Կոմիտեն նաև իր որբախնամ գործունեությամբ աչքի ընկավ: Ալեքսանդրապոլում նրա ենթակայության տակ գործող որբանոցները, որպես կանոն, աչքի էին ընկնում մաքրությամբ ու կարգապահությամբ:

ДЕЯТЕЛЬНОСТЬ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО КОМИТЕТА «БРАТСКОЙ ПОМОЩИ» В ГОДЫ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ

АЙРАПЕТЯН А.

Резюме

Ключевые слова: Александропольский уезд, общежитие, комитет «Братской помощи», переселенцы, приют, война.

В годы Первой мировой войны Александропольский уезд принял около 95000 беженцев. Местный комитет «Братской помощи», среди прочих, взял на себя тяжелую ответственность за обеспечение их физического выживания. В ходе своей миссии у Комитета были моменты взлета и падения, в его адрес неоднократно звучали ложные обвинения и клевета, а его деятельность становилась предметом обсуждения в периодической печати. И даже в этих условиях работа Комитета в целом была высоко оценена современниками. Лучшим свидетельством этого является крайне низкая смертность среди беженцев, поселившихся в уезде во время Первой мировой войны.

Комитет также внес значительный вклад в дело организации школ для детей беженцев. Первая школа, основанная Мирзояном, была открыта летом 1915 года и стала лучшей из когда-либо открытых для детей беженцев. Комитет также выделялся своей приютской деятельностью. Сиротские дома Александрополя, находившиеся в его ведении, отличались чистотой и дисциплиной.

ACTIVITIES OF THE ALEXANDRAPOL «BROTHERLY AID» COMMITTEE DURING THE YEARS OF THE WWI

HAYRAPETYAN A.

Summary

Keywords: Alexandropol uyezd, dormitory, "Brotherly Aid" committee, migrants, shelter, war.

During World War I, the uyezd of Alexandropol received about 95,000 refugees. The Alexandropol Committee of Brotherly Aid,

among others, took on the heavy responsibility of ensuring their physical existence. During its mission, the Committee had its ups and downs, it has repeadedly been the target of from slander and false accusations, and its activities became the subject of discussion in the periodicals. And even in these circumstances, the work of the Committee was generally highly regarded by contemporaries. The best evidence of this can be considered the extremely low mortality rate among the refugees settled in the uyezd during World War I.

The Committee also made a significant contribution to the organization of school work among the refugees. The first school was opened in the summer of 1915, and the school founded by H. Mirzoyan became the best for the refugee children. The Committee also stood out with its orphans' care activities. The orphanages in Alexandropol under its supervision were characterized by their cleanliness and safety.